

քերնիդ , հարուստ գանձերնիդ , սիրասուն ամուսինքդ ու զաւակըներդ , արիւննիդ և կեանքերնիդ , և միայն հոգինիդ տարիք անդին . բայց այն հոգին որ ձեր ամէն քաջութեան և նահատակութեան գործադիրն էր՝ նոյնը ըլլայ հովանի ձեր արեան քրտանց գին ազգին թափառական մնացորդացը : Այո , ձեր և ձեր նմանեաց երջանիկ հոգիքն միայն պիտի տան այն ազգին իր ցանկալի վերակենդանութիւնն՝ զոր կը խափանեն երկրաւոր կիրք և մահկանացու հնարք :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գաղափար Բարգմանութեան աստուածաշունչ Գառնից 'ի հայ լեզու 1 :

Ան ճշգիւ գտակաւ 'ի վերայ կալ, որպէս և այլուր կանխեալ ասացաք, եթէ որ աւելի հանգամանք հայերէն թարգմանութեան աստուածաշունչ մասեկիցն իցեն, արժան է միանգամ յընթերցումն մատչել : Եւ է նա բան և շունչ Աստուծոյ, զոր և 'ի կշիւ բաղդատութեան ընդ այլս 'ի գրեկոյ ձգել, բնաւ և ոչ կալցի որ յանձին : Եւ թէպէտ 'ի բազմաց սրբազանից արանց յայլ և այլ ժամանակս յորինեալ և կարգեալ, բայց զմի ևեթ ունի կէտնպատակի, զԱստուած ասեմ և զհրաշակերտն յարարածս նորա զմարդկութիւն . և եթէ որ զայն ընթեռնուցու, թուի իմն նմա, որպէս և յեկեղեցոյ վարդապետացն վկայեաց որ ուրեք, զնոր երկինս բացեալ տեսանելով, յորմէ ճառագայթք աստուածեղէն լուսոյն հատանիցին, առ 'ի լուսաւոր առնել զաչս և խտողել միանգամայն . քանզի են են 'ի նմա դարձուածք ճարտարահիւս բանից, և քերթողականին և հռետորականին և իմաստասիրական հրահանգաց վայելչութիւնք . բայց անխառն և անարատ 'ի մարդկեղէն ճարտարութեանց, իբրու զնոյն ինքն Աստուած որ ամենակատարն է և աննման :

Անգէն 'ի նախագրուես գրոցն զՄովսէս նկատեմ զաստուածատեսն և զաշխարհահամար, որ սքանչելահրաշ օրինակաւ զարարածոցն լինելութեան ճառս պատմէ . և դոյզմ բանիւքն յափշտակէ իմն զմարդ, և առեալ ածէ հուպ յաստուածութիւնն, որ բանիւ լոկով 'ի խաւարէ զլոյս վերբերէ, և զէսն յոչէից դոյացուցանէ . զՄովսէս զհաւատարիմն յամենայն տանն Աստուծոյ, որ երբեմն հրամանատարն է խորայելի ժողովրդեան, երբեմն պատմող փրկութիւնարբեր օրինաց, մերթ հեղ քան զամենայն մարդիկ, և մերթ սպառնալիս շանթից որո .

1 Չառաջին հատածն գտցես յէջ 212 Բազմավկալի Ը ամին :

տաւուր բարբառելով, և խաւարին մտագիշեր ալուցն զտահակն մատնելով, և զի զհուսկն ասացից, զՄովսէս՝ զմեծ նախամարդարէն և զարժանի յիշատակագիր աստուածային գործոցն և յուշարար նորա պատուիրանոց : Յոյժ 'ի դէպ դատեցան արգարև տեղեկագոյնքն և հմուտք 'ի բանասիրաց, որք ընդ քերթողահօրն Յունաց ընդ մեծին Հոմերոնի զնա 'ի կշիւ բաղդատութեան ածեալ ձգեցին . այլ խտիր մեծ ընդ արքունիսն իցէ իթակայ և ընդ վրանն Աբրահամու, ընդ ցաւս Անդրոմաքեայ և ընդ վշտս Ռաքելի :

Եւ յետ նորա զմիւս ոմն տեսանեմ մարգարէ համանման Մովսէսի, և թէպէտ ոչ յազգէ ընտրելոցն Աստուծոյ, բայց քան զընտիրան ևս ազնուագոյն դատեալ, որ 'ի վշտահար տառապանացն ձիւնաբերս աստուածային բարութեանցն յիշատակօք զանձն սփոփէր : Իսկ յաղաքս Սաղմոսացն և Սողոմոնի գրոց զինչ այլ յաւելից ասել, բայց զայն՝ եթէ Բարձրելոյն կամք լինէին նոքօք անդասին 'ի հին ժամանակաց՝ զմարդկութեանս զմիւսանգամ լինելութիւնն աւետաւորել, զսարտուցելոյ որդւոյն հօրն հանդիպել տեսութեան, և հայրենի գթոյն զոչ հանդուրժելն, այլ կարեկից հիգացելոյն եղեալ զերանէն 'ի տանէ և ընդառաջել որդւոյն, երկուցուն միանգամայն, Աստուծոյ և մարդկան, զմիմեանս ինդրելով, և 'ի բուն իսկ սէրն զմիմեանս գտանելով, որով փոխադարձ զմիմեանս սիրեցին : Երկարագունից արգարևալէտք էին բանից եթէ կամեցեալ էր զամենայն գեղ աստուածաղբեցիկ մարգարէութեանց առնել առաջի : “ Եւ ոչ ինքն Հոմերոն, ” յ զի ընդ մեծին գոչեցից եպիսկոպոսին Քամուլ, ” Բէի, հաւասարել կարից վսեմութեան ոճոյն ” Մովսիսի 'ի քերթողարան երգս անդ . և չիք որ ” 'ի քերթողացն Յունաց և Հոմոմոց, որ 'ի հաւասարութիւն ընդ սաղմոսերգոյն գալ կբրիցի, քանզի և ասելն միայն եթէ “ Աստուած աստուծոց, տէր խօսեցաւ, կոչեաց զերկիր, ” 'ի վեր քան զմիտս է մարդոյ . և ոչ Հոմեր հաւասարագոր վարեցաւ բանիւք իբր և զԵսայիաս, առ 'ի զմեծ վայելչութիւնն Աստուծոյ յայտնի ցուցանել . որ դարձեալ և զտուարածական քերթողոցն բերէ յանձին զկերպարան, յորժամ գերջանկաւէտ աւուրս խաղաղութեանն որ Քրիստոսիւ, յառաջագոյն պատմեցէ : Եւ իցէ որ առ հինան եղերերգակ քերթող քան զԵրեմիաս, ” յորժամ զբեկումն ժողովրդեանն իւրոյ դատնապէս արտասուից . և կամ իբրու զՆաուում, ” որ 'ի հեռուստ հոգւոյն նկատէր զկործան թաւաղար անկանել բարձրապարիսպ գոռողացելոյն Նինուէի . թուի իմն ընթերցանելեացն տեսանել 'ի մօտոյ զԳունդս զորացն որ յաւեր և յապականութիւն զՆինուէացոց քաղաքն դրնեն, և զաչիւնն լսել և զառաջիւն զնուց նոցա . և սոյնպիսի նկարագիրք են 'ի նմա զարմանալոյ արժանիք, զի ստորև յոյժ քան զնա զքերթողահայրն դասել որ ստիպիցի : Անթերցիր և զՆանիէլ, յորժամ Բաղտասարոյ արքայի կանխաձայն ազգից զարդարագատ վրէժիւրն գրութիւնն Աստուծոյ եկեալ հասեալ . և խընդրեալ թէ կարող իցես գտանել զլք 'ի հնոցն, ” որ զնոյնպիսի ատպս կերպարանաց բանից ունիցի : Եւ այնչափ խտիր ընդ արտաքնոցն քերթողս, է և ընդ մարգարէս, որչափ ինչ ընդ ճշմարիտ

տառից առնելով . ապա այնուհետև Սահակ որ
 միայն զազգին բարեւաւում թիւն կէտ նստապահի ա-
 ուջի եղեալ և անդադար էր 'ի վաստակել, առնոյր
 միւսանգամ' ի ձեռս զոյնն, և դարձեալ 'ի թարգ-
 մանու թիւն ձեռն արկանէր իւրովք ընտրելովք քա-
 կերտօքն, և ջախջախ մեծաւ Մեսրովպաւ : Այս
 է և յայտնուորացն ասել ('ի Մէհէի յԳ) եթէ
 յ Մեսրովպ խնդրեաց 'ի հայրապետն զճնար-
 տարան գիրս մեծի եկեղեցւոյն առ 'ի թարգ-
 մանել : Եւ հայրապետն Աստիկոս ետ նմա զաս
 տուածոյն գիրսն 'ի թարգմանութիւն : Եւ այն
 պիտի ճոխ կարգօք էլ Մեսրովպ Ստրմուլայ, և
 դարձաւ 'ի հայս առ սուրբ հայրապետն Իսահակ,
 և զախաւարգմանէալ գիրսն յԱսորոյ վերստին ուղ-
 զեցին : Դարձեալ և Աստղնկայ վկայեւն, եթէ
 Մեծ քահանայապետն Իսահակ որ 'ի զաւակէ
 սրբոյն Գրիգորի, զգիրս սուրբս դարձեալ 'ի յոյն
 լեզուէն 'ի հայ լեզու թարգմանէր հանդերձ Եզն
 կաւ, 'ի ստոյգ օրինակացն բերելոց սրբոյն Ղե-
 ռոնդի և այլոցն 'ի Կոստանդիական քաղաքէն :
 Եւ ձեռնտու օգնական նմա 'ի գործ թարգմանու-
 թեանն, որպէս և վերագոյնդ յուշ արարաք, լինէր
 երանելի այրն Աստուծոյ Մաշտոց, որ յարքունի
 ապարանիցն 'ի քարածերպս դէմ եղեալ ճգնել
 յանապատս, վասն բարեոյ ազգին դարձեալ յա-
 պատս իջանէր, և « Չճամբօրէն Հայաստանեայց
 զօգուան հոգալով, որպէս վկայեացն Կորիւն,
 ցանկայր զաստուածաշունչ գիրս թարգմանել 'ի
 հայ, յորմէ զիկեալ էր ազգն, և իւր ձեռնտու
 առնոյր զՅովհան Եկեղեցացին և զՅովսէփ Պաղ-
 մանցի : Եւ թէպէտ ստոյգ տեսութեամբ ոչ ինչ
 մարթիցիմք ասել եթէ զոր արդեօք մասն աստուա-
 ծաշունչ գրոց թարգմանեաց Մեսրովպ, բայց 'ի
 բանից Պատմագրացն մերոց խելամուտ լեալ ուսա-
 նիմք, զի նախ յԱռական գրոցն գայր 'ի թարգմա-
 նութիւն, իբրու կարևորագունի քան զամենայն
 գիրս յուսումն մանկութեան, զորոց այնչափ փոյթ
 խնամոց յանձին ունէր : Եւ յետ այնորիկ յորժամ
 ելեալ 'ի Միջագետաց գայր 'ի Աղարշապատ, և
 մարզանոցս անդէն վասն մանկուոյն հաստատեալ
 և 'ի Փայտակարան գաւառ անցանէր, զքնակիչս
 վայրացն Քրիստոսի հաւատոցն անաղակա տե-
 սեալ, « Ի ձեռն առնոյր յայնժամ, ըստ նորին
 Կորեան վկայելոյ, աստուածագործ մշակու-
 թեամբ զաւետարանական արուեստն 'ի թարգ-
 մանել 'ի գրել և յուսուցանել : յոր սակ կար-
 ծել արժան համարիմք եթէ և Նորոյ կտակին թարգ-
 մանութիւն Մեսրովպայ վաստակասէր ձեռացն
 արգասիք են :

Իսկ յորժամ ձեռնտու օգնականութեամբ երա-
 նելի աշակերտացն իւրեանց յաւարտն եկեալ հա-
 սանէին թարգմանութեան սուրբ գրոց, և ասեա-
 նելին իմն, որպէս հաճոյ թուի ոմանց կարծել, ե-
 թէ ոչ մինչև 'ի սպառ կատարեալ էր գործն, և զի
 ինքեանք յաղագորկենացն 'ի սպառուած մերձեալ
 հասեալ, և անանցականին սիրովն կարօտակեղ
 մաշէին, իբրու փոխարէն իմն այնքանոյ ջանիցն
 զորս աննախանձ յաշակերտեալս հեղին, պարտս
 սիրելիս և վարժողացն և վարժելոցն 'ի վերայ զը-
 նէին, միւսանգամ 'ի հայրենի հանգրուանացն
 մեկնել և ընդ օտար աստղբք պանդխտիլ, եթէ
 պանդխտութիւն արժան իցէ կոչել, որոց կէտ
 նպատակի առաջի եղեալ էր զսէրն հայրենեաց, և

զհրաշափառագոյնն քան զայն՝ զսէրն երկնային :
 Զսոյն զայս և խորեհնացի նշանակեալ կարգէ . յետ
 գործմելոյն 'ի գրի եթէ զնորք յԵփեսոսի ժողովոյն
 դարձ մեր թարգմանչացն արարեալ, ընդ կանոնաց
 ժողովոյն և զստոյգ օրինակս գրոցն բերէին . « Զոր
 յ առեալ, ասէ, մեծին Սահակայ և Մեսրովպայ,
 յ դարձեալ թարգմանեցին զփանդամ թարգմա-
 նեան, փութմանակի հանդերձ նորօք վերստին
 յօրինել նորոգմամբ : Բայց քանզի անգէտք էին
 մերում արուեստի, 'ի բազում մասանց թերա-
 ցեալ գործն գտանէր . վասն որոյ առեալ մեծին
 Սահակայ և Մեսրովպայ զմեզ՝ առաքեցին յԱ-
 զեքսանգրիս 'ի լեզու պանծալի, 'ի ստոյգ յօ-
 գանալ ճեմարանին վերաբանութեան, և Ար-
 տանօր խրթնաբանէ իմն խորանեցին, և ոչ կարեմ
 հաւատեալ կալ 'ի վերայ եթէ զինչ բանիւքս նշա-
 նակիցէ : Զի եթէ զվարդապետան իւր նուազեալս
 յուսումն յուսականին ասիցէ, զարմանալ յոյժ, զի
 գիտեմ ընթերցեալ 'ի Ղազարայ գիրսն վասն սրբոյն
 Սահակայ, եթէ « Այլքն ոչ լինէին բաւական 'ի
 վճարել անսխալ ուղղակի, (զթարգմանութիւն
 սուրբ գրոց) առանց առաջնորդելոյ նոցա սուրբ
 հայրապետին Սահակայ, որ յոյժ առլցեալ ան-
 ցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յուսուց, :
 Եւ այլ ուրեք դարձեալ, թէ « Երանելին Մաշտոց
 և որ ընդ նմա պատուական քահանայքն էին՝ ոչ
 զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ և կա-
 բեր գործն, թարգմանել գիրս 'ի յոյն լեզուոյ 'ի
 հայ բարբառ . վասն զի ոչ ինչ էին այնպէս տե-
 ղեակ գիտնապէս հրահանգի յուսարէն ուս-
 ման . ապա ժողովեալ . . . սկսան աղաչել զսուրբ
 կաթողիկոսն հայոց Սահակ, արկանել զանձն
 յաշխատութիւնն հոգևոր : Իսկ յողագս
 հայերենին ուսման, բնաւ և կարծել անգամ յան-
 զբնութիւնն ոչ համարեցի, գիտելով չափ եթէ
 ամուլքն զուգակիրք, նոքա էին որ արօրագիր յան-
 գաստանս հայերէն զպրութեանց եղեն, և աշակեր-
 տըս արժանաւորս անուան իւրեանց մեզ ընծայե-
 ցին : Եւ ճեմարան վերաբանութեան կոչէ ոչ միայն
 զտեղին ուսման, այլ և զժողով ուսողացն և ու-
 սուցչաց, զոր և Մագիստրոսի տեսանեմք ռբբք
 առեալ 'ի կիր : Եւ քանզի ընդ այն ժամանակս կա-
 ըի համբաւատենչ Աղեքսանդրացոց քաղաքն էր,
 յորում ամենայն բոյսք հանձարոյ ելլազական և
 լատինի գպրութեանցն իւրեալ կուտակեալ էին, և
 իմաստասիրաց արանց հանգիստարան էր շքեղ, և
 յուսականին առուելութեան 'ի ծաղկի էր բար-
 բաւն, թուի իմն և իմաստնապէսիկ մերոցն վար-
 դապետաց յայն քաղաք գիմեալ արշաւեալ, յօգա-
 նալ ճեմարանին վերաբանութեան, (կամ գէրգե-
 նա-լեան, որպէս ինձիձեանն կամեր ընթեռնուլ
 մեծարդոյ վարդապետն և հայրենի իրացն մեծա-
 պէս տեղեակ) : Բայց զառաքումն նոցա յԱղեք-
 սանդրիս յայն սակս համարիմ ետ լեալ, եթէ ոչ
 'ի կարծիս մտացն իմոց իսբիցիմ, զի և ընդ Աղեք-
 սանդրեանն անուանեալ օրինակի, որ այնչափ ար-
 գոյ և պատուական քան զամենայն գրչագիրսն է
 աստուածաշունչ տառից, 'ի կշիռ բաղդատու-
 թեան զհայերէն թարգմանեալն ածցեն . և այս
 պատճառք են ասա որպէս ինձ թուի, զի թարգ-
 մանութիւն մեր թէպէտ և 'ի հարազատ օրինակի
 եթէմանասնից փոխաբերեալ 'ի հայ, բայց ուրեք
 զմանութիւն իմն զասորականին բերէ, և այլ

ուրեք գարձեալ զաղէքսանդրեան օրինակին :

Բայց այլ իմն կարեորագոյն խնդիր բանադառնքն յուզեն , զոր և պատուական խորովոյս առնել առաջի ոչ զժպատեհն ինչ արդեօք թուեսցի : Քանզի կարծիք եղեն ոմանց , եթէ ոչ ամենայն գիրք հնոյ և նորոյ կտակին , թարգմանութիւնք իցեն վաղնջուց ժամանակաց , և կամ հինգերորդի դարուն . այլ թարգմանիչքն երանաշնորհք միայն զՔսան և երկու Եսայոնիսն , որպէս և խորոնեցին ուրեք ակնարկէ , ի հայ բան փոխեալ արձանացուցին . և ապա յետ բազում ամաց ի վերայ անցանելոյ՝ յայլոյն վաստակատէր ջանից ի յանգ ի և կատարուն այն ամառ : Եւ պատճառս երկմտութեանն իւրեանց նախ զՊատմագրացն ոմանց յեանոց զբանան համարին , և երկրորդ անգամ զեղանակ շարագրածին : Առանիկ ասեն , և ժամանակագիրն Սամուէլ և կամ Բնգարձակող նորա , ի Քրոնիկոն կանոնան յաղագս Գրիգորի Վկայաբիրի ասէ եթէ “ Սալուսս սաւորեաց զՀայաստան աշխարհս բազում և ազգի ազգի մեկնութեամբք , որ ամենայն սղզաց թարգմանութիւնս արարեալ , և լցեալ առհասարակ զէկեղեցի Ատուծոյ ամենայն աստուածային կտակարանացն , : Գարձեալ և Ունհայեցին Մատթէոս յիւրումն Պատմագրութեան . Սա նորագեաց զխորհրդ հաւատոց Հայաստանայց , և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ , և զամենայն պակասութիւն կտակարանացն Ատուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց , ի յունաց և յասորեաց թարգմանութեան հոգս տարեալ , անդադար խորհրդով և ամենայն պայծառութեան սուրբ գրոց ելից զէկեղեցի Հայաստանայց . . . Եւ էր սա նմանեալ առաջին իմաստանոցն Հայոց , Մովսիսի ունիմասեւ և Գաւթի . վասն զի ունէր զԷլուիս աթենացի և լեզու հրեղէն ներկեալ , և զիւրաւ առնոյր զժամկոց երեսաց հին և նոր կրտակարանացն Ատուծոյ , և բանայր զգուռն աստուածաբուրիս աղբերացն , և զքղիսումն սրբոյ հագոյն զեղոյր ի լուիս հաւատացեալ ժողովոր . գոցն , : Նոյնպէս և Շնորհալին հայրապետ յիւրում ասենաբանութեան . “ Մինչև ի Գրիգորիոս , որ և Վահրամ նախաձայնեալ , և ի Բասիլիոս , որք . . . նակ լցողք (եղեն) եկեղեցւոյ լուսաւորութեան , յետ նոցին աստուածաշունչ գրոց կտակարանաց թարգմանութեանց . և ամենայն բարեմասնութեամբք յաստուածայինն յառաջացեալք ի նուազեալս վերջնում գարու ժամանակին , : Բայց թէ ինչ բանք պատճառացս թուեսցին անուշա իմաստուն լուեւացդ , և առաջարկութեան բանիցս ոչ յոյժ պատկանաւորք : Զի գիրս սուրբս ասել առ մեզ թարմատար իմն է , և ոչ միշտ յաղագս աստուածաշունչ տառիցն առեալ ի կիր , այլ և յաղագս մեկնութեանց նոցա և պարզարանութեանց , և վկայարանութեանցն սրբոց և յաղագս հոգևորականացն իսկ ճառից , սովորութիւն առ մերսն եղև սրբագրոյժ գիրս զայնուսին կոչել : Եւ եթէ հաւան ինչ կարծեսցա զանձինն ցուցանեալք , համարել արժան էր զի բազմագոյնք յաստուածարեալ նախնեացն մերոց , անգագար ի թարգմանութիւն աստուածաշունչ գրոց իցեն պարապեալք . քանզի զբազմագուռնից ի նոցանէ զայսպիսի իմն վկայութիւն տան Պատմագիրք ազգիս , որպէս և տեղեակքն գիտեն . շատ իցէ մեզ

աստեն ի հաւատի խելամառութիւն իմոցս բանից , զՎիրակոսին ամէլ ի մէջ , զոր յաղագս Գրիգորի Պալատուռնոյ ասէ , եղբոր Ներսեսի Վրայեցւոյ , եթէ “ Վկաս թարգմանութիւն առնել աստուածային գրոց , և բազում գիրս եւ թարգմանել ի հայ լեզու , զորս ինքեամբ և զորս այլոց ձեռամբ , : Եւ արդ գիտել արժան է զի Գրիգորիոս Վկայասէր , բազում ինչ ի վկայարանութեանց և ի վարուց սրբոց թարգմանեաց ի յոյն և յասորի բարբառոյ , որպէս և Ունհայեցին վկայեաց . բայց և ի թարգմանութիւն դալ սրբազան տառիցն և յոժարեցաւ իսկ ոչ . քանզի և չէր իսկ պիտոյ , երանաշնորհիցն թարգմանչաց կանխեալ յառաջեալ գոլովքան զնա յայն վաստակ :

Ի լուիցուք և նմին ինքեան եթէ զինչ վասն անձին իւրոյ և երկասիրութեանցն ասիցէ յինքնագիր յիշատակարանին , զորոյ զհաւատարն ի գրչագիրն գրոշմեալ տեսանեմք . “ Ես Գրիգորիս ճառայ Աստուծոյ և զիտապեա հայաստան ազգիս , և համարձակեալ վասն սիրոյ վկայից Քրիստոսի . . . և աշխատեալ զայսպիսի համառոտահաւոյր աստուածայն գրեցաք ի սյաջառութիւն եկեղեցւոյ . . . զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց , զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով մեք աշխատութեամբ թարգմանեցաք ի յունականէն ի մերս գիր և բառ : Վասն որոյ աղաչեմ սրբութեք վկայիք զամենեւեան առ հասարակ , մի անփոյթ առնել զմեր աղէտանջ երկս աշխատութեան , : Ես և ոչ ի լուսն զխորհրդ և զմեծ վաստակն ամեալ , պատուէր ի վերայ գնէր Վիրակոսի վարդապետի , որ մահանուն Գիտակալ կամ թարգմանիչ յորջորջէր , ի յանկ զայն հանել : Եւ որոչ բանիւք ի Եսայամառութեան գրի տեսան Վիրակոսի (Օգոստոս 8) ի յիշատակի սրբոց հայրապետացն Գրիգորի և Ներսեսի , եթէ “ Սքսա եղբարք էին հարապառք , յազգէ սրբոյն Գրիգորի (լուսաւորչի) և ազգականք տէր Վահրամայ՝ որ Գրիգորեան կոչեցաւ , զոր կոչելին Վկայասէր , վասն պատուելոյ զվկայան , և թարգմանելոյ բազում ճառս ի հայ լեզու և ի գիր , : Եւ Շնորհալի հայրապետն յիւրումն վիպասանութեան զնա ի գովեստ առեալ , և ոչ ինչ յաղագս թարգմանութեան աստուածաշունչ մատենիցն նշանակէ : Քանզի և անպատեհ իմն թուի կարծել , եթէ երանաշնորհ թարգմանիչքն , որոց ի վշտագին կեանս յերկարեալ և անպարտալ զանձինս ի թարգմանութեանց կոչելին , զանց զաստուածայնովքն արարեալ մատենիւք , և յարտաքնացն գային ի թարգմանութիւն գրոց , որք և ականատես ականջալուր վկայքն էին եթէ զխորհրդ մեծ վարդապետն իւրեանց Մեսրոպ Նուիրական քրտամբքն զնուիրականն թմայր լուրին և ափափայց , գիր և սիւղորայս ճարտարել հայեքն զպրութեան , միայն՝ որպէս և Վարդան ասէ պատմագիրն , զի զսրբագրում մատենիցն նուէր համագրեացն իւրոց զթարգմանութիւնն հանցէ , և ի մտացոնս զվաստակս նորա թողուին , և երթայր ոմն զՄակեդոնացւոյ արքային զպատմութիւն վարուց թարգմանել , և միւս ոմն զՆուսեան արքայ Քրոնիկոսն և զՓիլոն և զայլս : Գարձեալ և զպատմագրացն մերոց վկայութիւնս բանից աղէ զինչ առնել արժան իցէ , որք միտայն բարբառովքնք սքանչելւոյն Կորեան , զբովանդակ զՀայաստան աշխարհ մարգարեագէտս և առաքելաժամանակ և առետա

բանաժառանգս լեալ գոչին, և ամենայն աւանդե-
լոցն Աստուծոյ ոչ ինչ անտեղեակք: Իսկ Խորոնե-
ցւոյ տսեղն միայն վասն սրբոյն Մեարովայ է, և
թէ “ Իսկոյն ’ի Թարգմանութիւն ձեռն արկեալ,
» խորհրդաբար սկսանելով յԱռակոց, բովանդակ
» զՔսան և երկու Յայանիսն և զՆոր կտակս յեղու
» ’ի հայ բան »: Եւ զոր Եղիշայն ասէ, և զայն ոչ
մնացայց, վասն սրբոյն Վարդանայ որ ’ի ձեռն
զքաջ նկարագիրն առեալ զՄակաբայեցոցն, և
յուսնին զորաց իւրոց յեղեղէր. զհայ Թարգմանու-
թիւնն անշուշտ, զոր նորուն սրբոյ Եղիշայի շա-
րադրած բազումք ’ի հմայն կարծեցին, քանզի
զյոյնն ոչ ամենեքին իմանային, որպէս և յառա-
ջագոյն ասացաք:

Եւ միւս այլ պատճառս երկմտութեան զայս-
ման շարագրածին համարեցան. զի ոչ յամենայն
գիրս զնոյն տիպ գեղեցկութեան նշմարիցէ որ:
Յիրաւի են ասացեալքն, բայց և ճշմարտութեամբ
է ասելս, եթէ անմանութեան ոճոյն ստգիւտ ոչ
ինչ ամենեկին զմեր կողմն ընկճիցէ: Եւ չհաւանիմ
իսկ եթէ սագիւտ արժան իցէ կոչել և ոչ վայելուչ
ճարտարութիւն մերոյն կորովամիտ Թարգմանչաց,
որք այնպէս տեղեկագոյն հմուտքն էին արուեստի
Թարգմանութեան, զընագրին կերպարանս ա-
ռուեսել ևս ’ի փոխարերութեանն փայլեցուցանե-
լով. և այլ իմն պատմականացն տալով կերպարան
գրոց, և մարդարեակնացն այլ, և սաղմոսացն և
խրատականաց. քանզի և բազմագէտ իսկ կերպա-
րանք ևն գեղեցկին: — Բայց խախտ մեծ և յոյժ
մեծ է, ասեն, ’ի Թարգմանութեանն: Իսկ զինչ
այտի. զի յայնժամ և եթ մարթէր զայդ ասել, ե-
թէ կարծէաք իմն զի միոյ և եթ Թարգմանչի վաս-
տակք իցեն բովանդակ աստուածաշունչ գրոցն
Թարգմանութիւնք: Եւ քանզի բազմաց յայն մեծ
և դժուարաքիրսն գործ ձեռն արկեալ ասացաք,
որպէս և էն իսկ ճշմարտութեամբ, բնաւ և զար-
մանայցեմք իսկ ընդէր ընդ խախտ զոր ասանի-
ցեմք. զի սքանչանալոյ արժանի այն էր արգարե
եթէ զհակառակն լեալ նշմարեաք: Տես ինչ զի ’ի
միոյ վարժարանէ և նովին կարգօքն հրահանգեալ,
եղանեն Թարգմանիչքն ամենեքին. այլ ո՞ զխախտն
ոչ տեսանիցէ ընդ Եղիշէ և ընդ Ղազար փարպեցի.
ո՞ ոչ գիտիցէ ընտիր առնել ընդ Մնայլթ փիլիսո-
փայն և ընդ Վոզբայի իմաստասէրն, միայն զի ա-
կանջք և արտոժակք իցեն նորա. ո՞ զՎորեան գիրսն
ընթերցեալ և ընդ Խորոնեցւոյն զնա շփոթիցէ, ե-
թէ միանգամ և ընդ նորա Պատմագրութիւնն ան-
ցեալ իցէ: Աւանիկ հինգերորդի լուսափայլ դա-
րուն վաստակք են Փիլոնի գրոցն Թարգմանու-
թիւնք, Եւսեբեայ ժամանակացն կանսնք, Ոս-
կեբերանի և Բասիլիոսի և Գաբաղացւոց հայրա-
պետի ճառքն, և սաստուութիւնն Մակեդոնացւոց
արքային. և եթէ չիցէ ինչ ’ի նոսա խախտ զանգա-
նութեան, զայն թող հմուտքն տեսցեն. և գրա-
ւորականին ճոխութիւն զայդ արդեօք պահանջի-
ցէ. և զի իւրաքանչիւր առանձինն միտք են և խոր-
հելոյ եղանակ, չիցէ և մասնակաբեւոյ առանձինն
տարապ: Եւ մի խիղճ թուեցի ոմանց, օրինակ իմն
զՄակաբայեցւոց գրոց ’ի հայ փոխարերութիւն
վաստակ ասել Թարգմանչացն սրբոց. իրրու զի օ-
տար է յոյժ յոճոյ Թարգմանութեան այլոց մա-
տենից. զի թէպէտ և խախտ մեծ իցէ ’ի միջն, բայց
ոչ և թէ սագանաց արժանաւոր. զի շարագրած

ընտիր է և անդէն որպէս ’ի Լինելութեան գիրսն’
և հայերէն գարուութեանց վեհագոյն վարժապե-
տի: Եւ զՍիրաբայ գիրսն մի որ ինչ ’ի դէմս ածցէ,
որոյ կրկին նաև երեքկին Թարգմանութիւնք են
յայլ և այլ ժամանակս յարմարեալ, զի միոյ գրոց
երթալ ’ի կորուստ’ մարթ իսկ է. բայց քսանից և
աւելն ևս գրոց միանգամայն կորնչել և անհետ
բառնալ, այդ յանհնարիցն իմն թուի: Աւանիկ և
սաղմոսացն մատենաք, անգասին յաւուրց հնոցն
նախնեայ, գուցէ և յաւուրց սրբոյ Լուսաւորչին
Թարգմանեալք էին. և ’ի տասներորդի դարուն
բուն և հարազատ օրինակն այնր Թարգմանութեան
կորնչել, և մեծ վարժապետն Յովհաննէս Սար-
կաւազ’ զբազում աւուրս ժամանակաց ’ի խնդիր
նորա գեղեցեալ, ուր ուրեմն զանձկացեալն դա-
նէր ’ի հաղթատուրց վանսն: Կոյն գեպք անշուշտ
և ընդ Սիրաբայ գիրսն անցանէին:

Եւ յազգաս այսորիկ այսչափ: Մտախոցք արդ
քննել սակաւուք և զպատուական հարազատու-
թիւն մերոյս Թարգմանութեան:

Հրաշափառագունիւ արգարե արժան էր անցա-
նել բանիւ, առ ’ի յայտ զհարազատութիւնն առ-
նել զմերոց աստուածաշունչ պատգամացն, գիտե-
լով չափ եթէ և այս առանձինն իմն պարզեք են
աստուածեղէն ինտմոցն, զոր առ յուրվս յազգաց
դտանել դուն գործեցին հմուտք, և զրաջանք ’ի
վաստակոցն լեալ, յորժամ զննդրեալն ’ի մերում
Թարգմանութեան գտանէին, կրկին և լիալիւր շնոր-
հապարտ մեծարանս նախ մերոց նախնեացն հա-
նէին, ընդ քաջուչիմ միտս նոցա հիացեալ զարմա-
նալով, և երկրորդ անգամ’ հայաստան ժողովրդ-
ոց, որ այնպէս իմամատար տւանդապաչք եղէն
մեծի գանձուցն: “ Ի զուր է ’ի զուր, ազաղակեր
» Սէն-Մարթէն, բազմալեզուեայս յօրինել աս-
» ստուածաշունչս, զազգս ազգս բարբառոց ’ի հա-
» մեմատութիւն ամեւ, զի բուն և հարազատ ի-
» մաստից աստուածեղէն գրոցն խեղամուել կարի-
» ցեմք. չեն պէտք այնքանոյ վաստակոց, շատ այն
» է եթէ ընդ հայերեւին լոկոյ’ զյուսնական եօ-
» յ, թամանիցն մեր ’ի համեմատութիւն ամիցեմք »:
» Անգրէաս Վիլլուլթոն յիւրումն կանխաբան
» ծանօթութեան Ողափոյ կամ հայերէն Աէրի-
» ծարգոյ Թարգմանութիւն զմերն կոչէ, և հռչակա-
» ւորագոյն ընդ ամենայն արեւելս. և այնչափ է, ա-
» սէ. հաւատարմութիւն նորա, զի և զնշանախեց ան-
» գամ ոչ կարիցես յաւելուլ և կամ գեղեցիկ: Եւ Լու-
» գովիկոս Փիլքէ “ Հին և վաղեմի է յոյժ, գոչէր, հայ-
» երէն Թարգմանութիւն. և արժան իսկ է զբուն
» բնագիրն յուսնական ուղղագրել ’ի վերայ հայ-
» ոյն »: Սոցին ձայնակից և առաւել քան զսոսա
» ճշմարտութեան բանիցս վկայեցին և հողգինկեր
» և Վոլիոս և Ուրսինոս աստուածաբանութեան վար-
» դապետ, և բազմատեղեակ այրն Երոտէր յիւրումն
» Արամեան գանձարանի: Իսկ Լա-Քրոզ Վէյլեր նա-
» մակաղիր առ Լանֆան լինելով, զարժանաւորս
» զայս արձակ բարբառ. “ Հայերէնն, ասէ, Թարգ-
» մանութիւն աստուածաշունչ գրոց, որպէս ինչ
» թուի, Թագուհի է ամենայն Թարգմանու-
» թեանց. քանզի և բարբառ ճոխ է այն, և բա-
» ւական’ առ ’ի զամենայն իմաստս բնագրին’ լի և
» անթերի ընծայել. . . Իսկ յազգաս նախնի հնու-
» թեան Թարգմանութեանս, բնաւ և յերկրայս
» իսկ լինել չէ արժան. քանզի պատմագիրք նոցա

(Զ . 6) . « Եւ արթացաւ Առտուած զի արար զմարդն 'ի վերայ երկրի , և մաախոհ էղև 'ի սրբի Խորհակ » . յեօթանասնիցն պակասէ , բայց ոչ նոյն պէս և յայլ թարգմանութիւնս :

(Զ . 7) . Ի հայերէնն գնի . « Զնջեցից զամենայն մարմն զոր արարի յերեսաց երկրի » . բայց եօթանասնիցն և այլք ամենեքին փոխանակ մարմնոյն զնեն զմենայն մարդ . սակայն մերն առաւել 'ի գէպ թուի և պատշաճ , քանզի և այնպէս իսկ էղև , ոչ մարդոյն միայն՝ այլ և ամենայն արարածոցն կօրուստ 'ի վերայ հասանելով 'ի համայնաջնն ճեղզս անդ ջուրոցն :

(Է . 11) . « Պատուեցան աղբիւրք անգնդոց բազմաց » . պակասէ յեօթանասնիցն , բայց ոչ և 'ի հերթայական բնագրին :

Դասարար . (Է . 6) . « Եւ էղև թիւ ամենեցուն որ լափեցին ձեռամբ և լեզուով իւրեանց , երեք հարիւր այր » : Այսպէս է հայ ընթերցուածն , և ստուգութեան նորա վկայէ Ազգաստիսոս 'ի գնէն նախ որպէս զմերն և ապա յաւելուլ , եթէ « բազումք 'ի լատին օրինակացն չունին և յեռամբ , այլ միայն զէրուստ . և թէ յոյնն ունի զերկոսին միանգամայն » : Բայց 'ի յոյն տպագիրան և 'ի ձեռագիրս և կելալս առ մեօք ոչ ուրեք տեսանելիք :

Ա . Թագարար-Թիւն . (Է . 2) . Ըստ մերումն թարգմանութեան գրի . « Եւ յարեաւ Դաւիթ և էլ յաճապասն Մանայ » : Իսկ յԱղէքսան գրեանն , յերթայեցուցն , 'ի վուլկաթայն լատին նացուց , յասորի թարգմանութեանն և յարարացուցն գրի « Յանապասն Փառան » . և զի վրիպակաւ գրեն , յայտ է նախ տեղեկացն սրբազան աշխարհագրութեան , և գարձեալ զի յերկրորդում տանն և առ նոսա իսկ այսպէս գրուցեալ տեսանի . « Եւ էր այր մի 'ի Մանն , և հօտք իւր 'ի Կարմելոս » :

Բ . Թագարար-Թիւն . (Է . 7) . « Եւ էղև 'ի կատարել չորից ամաց » . այսպէս 'ի մերումն թարգմանութեան գրի , որ ուղղագրոյնն է և առաւել 'ի գէպ եկեալ ժամանակագրութեան , որպէս յայտնի է 'ի բանիցն Յովսէպոսի Փլաւէայ , և ասորի և արաբացուց թարգմանութեանն և վուլկաթայն և այլոց բազմապատիկ ձեռագիր գաղափարաց , թէպէտ և 'ի տպագիրան յունականս այսպէս եղեալ կայ . « Եւ էղև 'ի կատարել քառասուն ամաց » :

Գ . Թագարար-Թիւն . (Է . 3) . « Եւ Սողոմոն նստաւ յաթոս թագաւորութեան հօր իւրոյ Դաւիթի ամաց երկուսասնից » : Այլ տիոցն Սողոմոնի միայն 'ի մերումն թարգմանութեանն յիշատակին , և յԱղէքսանգրեան գրչագրին և յԱլտինեան արպագրին . իսկ յայլոն 'ի սպառ պակասէ : Վասն որոյ և մեկնչացն 'ի տարագէպ կարծիս անկանել , բազմաց զնա երեսնամեայ թագաւորեալ հռչակելով :

Դ . Թագարար-Թիւն . (Է . 2) . « Որդի տմայ քսանից էր Աքաղ 'ի թագաւորել իւրում , և վեշտասան ամ թագաւորեաց յՆրուսաղէմ » : Դարձեալ և յաղագս տիոցն Աքաղու անմիաբանութիւն մեծ յայլ թարգմանութիւնս է , և ստուգագրոյն մերս թուեցաւ հմախցն ըստ ժամանակագրական հաշուի :

Ա . Մնայարար . (Զ . 28) . Յոյնն , Վաաիկանեանն , Աղէքսանգրեանն , հերթայեցին և վուլ-

կաթայն այսպէս ունին . « Որդիք Սամուէլի , անգրանիկն Սանի և Աթիա » : Իսկ հայերէնն , ասորին և արաբացին գրեն . « Որդիք Սամուէլի , անգրանիկ նորա Յովէլ և երկրորդն Աթիա » : Եւ զերկրորդս ուղիղ քան զառաջնն է , յայտնի է յԱռաջին թագաւորութեանց գրոցն , (Է . 2) յորում վայրի ամենայն թարգմանութիւնք այսպէս նշանակեն . « Եւ այս էն անուանք որդւոց նորանգրանիկանն Յովէլ և անուն երկրորդին Աթիա , գատաւորք 'ի Բերսարէէ » :

Բ . Մնայարար . (Ժ . 2) . « Եւ անուն մարտիրոս Մաաբա , գուսոր Ուրիայ 'ի Գաբաւոնէ » . այսպէս ընթեռնուիք յամենայն օրինակս թարգմանութեանց , բայց 'ի հայոյն՝ յորում Մաաբա գուսոր կոչի Աբեսաղոմայ . և վկայեն ստուգութեանն երկրորդ Մնացորդացն գիրք , յորս յաղագս Ռորովամայ գրի , եթէ « Էառ զՄաաբա գուսոր Աբեսաղոմայ » :

Սաղմա . (Կ . 19) . « Ել 'ի բարձունս և գերեաց զգերութիւն , առ աւար , բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան . քանզի և թերաշաւատից ևս բնակեալ եղիցի 'ի նմա » : Այսպէս 'ի հայ թարգմանութեանն է , անմիաբան յայլոցն ամենեցուն . բայց ճշգրտութեան մերումն վկայէ Առաքեալ յԵփեսացուց թղթին (Գ . 8) և Յուստինոս եկեղեցոյ վարդապետն 'ի տրամախոսութիւնսն որ ընդ Տրիփոնէայ :

Պրտարար . (Զ . 3) . « Յարեան ոմանք 'ի ժողովրդէնն որ կոչէր Լիբեացուց և Կիւրենացուց » . այսպէս հայ թարգմանն . բայց յայլոն ամենեկին նշանակի եթէ « յարեան 'ի վերայ նորա արք շարժարժ » . յաղագս ճայնիցն նմանութեան որ 'ի հելլեն և հոռոմ բարբառս . բայց զի գոյնն բազումք զայնու ժամանակաւ և 'ի Լիբեացուց ժողովրդէնն 'ի հրէից աշխարհին , յայտնի է գարձեալ 'ի Գործոց գրոցն :

Այսչափ աւաստիկ սակաւս 'ի բազմապատիկ լատութեանց մերումն թարգմանութեան նշանակեալ , կարգեցուք և ինչ ինչ՝ յորս յունականն ընտրելագոյն քան զմերս թուի , որ 'ի հելլեն կամ 'ի հայ գրչացն անփութութեանն սարգեցան մտին և ոչ 'ի թարգմանի վարդապետացն անտեղեկապիտութեանն . քանզի յայտնի վրիպակք երևին գաղափարողաց և ոչ իւրք ստգիւս թարգմանութեանն ամեն :

Ղէաբակ . (Ի . 16) . « Ըստ յաճախելոց արմաշն յաճախեաց և պայտասած իւր » . յոյնն , « մաղ » :

Բ . Օրէն . (Ի . 65) . « Տացէ քեզ տէր անսիրտ տրամեալ , և աչս սորեալս և անձն հարեալ » . յոյնն , հալեալ :

Դասարար . (Ի . 23) . « Եթէ յաւելցուք մարտիկ 'ի պատերազմ ընդ Բենիամենի եղբօր մերում » . յոյնն մարտիկ :

— (33 25) . « Եւ սատակեաց միւսանգամ 'ի ժողովրդէնն անտի սով հապարարանց յերկիր » . յոյնն և հելլէ . ուրեքսան հապար :

Բ . Թագարար-Թիւն . (Ժ . 23) . « Եւ էղև յետ էրէմոյ աւուրոց » . յոյնն , էրիէամ :

Գ . Թագարար-Թիւն . (Է . 7) . « Արար և յարկ եղևնափայտիւք 'ի յատակէ մինչև յարտի յոյնն , շէլեայարի » :

Դ. Թագաւորութեան . (ԻԳ. 35). “ Այր ըստ իւր իւրում ետուն զարծաթ և զսպի , յոյն , ըստ սի : ”

Ա. Մնացորդ . (Ե. 24). “ Եղիէլ և Յերեմիա և Յովդիա և Իզիէլ , որս զորաւորք , յոյն , որս :

Բ. Եւր . (Ժ. 3). “ Եւ արդ որպէս կամիս արի և ինչ զսոսա օրինօքն ակառն Աստուծոյ , յոյն , երէն . φοβερισον :

Նեեֆ . (Գ. 31). “ Ի մէջ գրան ջրօրին կալան Բեղիթ և մեծատունք քաղաքին , յոյն , Կալիթ , որ χαλκῶ : առ նոսա կոչին :

— (Ե. 10). “ Դարձուցուք այսօր զանգաստանս , զայգիս և զձիթենիս զսոսա գոցա , յն . զսոսա :

Ե. Եւր . (Դ. 7). “ Մուրթեք եցոյց նմա զժիւրս որպէս և լեալ էին , յոյն , շիւն :

— (Թ. 15). “ Եւ իսպառնիս արս չորեքհարիւր , և ոչ ինչ յափշտակեցին , յոյն , որպէն կամ կոտորեցին :

Յարի . (Ժ. 8). “ Ի ցնծութիւն և յուրախութիւն որդւոցն Իսրայելի և ի Բագաւթի , յոյն , Բագաւթի :

Ա. Մալթ . (Դ. 47). “ Շինեցին զարուծութիւնսն , և ու ինչ էր ի ներքս տաճարին , յոյն , որ ինչ :

— (ԺԳ. 32). “ Թագ առ զստիացոցն , և արար համարս մեծամեծս յերկրի , յն . հարստ :

— (ԺԴ. 34). “ Եւ որ ինչ միանգամ պէտք էին ինչն , հասարակութեամբ յօրինեաց զնոսա , յոյն , ի հասարակութեան նոցա :

Բ. Մալթ . (ԺԲ. 36). “ Այլ Եւրեայ նոցա , իրրև երկայնագոյն լինէր նոցա մարտ պատերազմի , յոյն , Եւրեայն :

Յերեքտասան գլխին ի թուահամարսն 3 և 7 փոխանակ Շիմի . Մեծեղսս գրեն յունացն աստուածաշունչ մատանք :

Սաղմ . (ՃԽԴ. 13). “ Խաշինք նոցա բազմածինք են և բազմանան ի գնացս իւրեանց , և անդ նոցա պարարտք են , յոյն , անդ :

Եւր . (ԺԵ. 4). “ Վասն այնորիկ երբ Մովսրացոցն գոչէ , և անձն իւր ծանկեց , յոյն , ինչ :

Ուեէ . (ԺԴ. 9). “ Ես իբրև զայֆի պողախայծ , յինէն գասաւ պտուղ ի քեզ , յոյն , շի կամ զբեւիթի :

Ամու . (Ը. 4). “ Որք նեղէիք զանանկն ընդ առաւօտս , և զրկէիք զաղքատս յերեւոյն , յոյն , յերեւ :

Միւթ . (Զ. 11). Իցէ թէ արգարասցի կուտանսն անօրէնն , և պայուսակաւ կըռոց նեղութեան , յոյն , ի ինչ :

Ուր . (Ա. 20). “ Արտաքուստ ժողովեաց զիս սուր , որպէս և մահ ի ներքուստ , յոյն , անձանկեաց :

— (Բ. 19). “ Արի ի խոստովանութիւն ի զիւրի , ի սկիզբն ի գլուխ գահոց քոց , յոյն , Կահոց :

Հ. Գ. Զ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՍՏԵՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երկր :

Երկր Երեսը փալիւրող անթիւ անհամար լուսաւորաց մէջէն մոլորակ ըսուած աստղերէն մէկն ալ երկիրս է , ուր կը բնակինք , որ ուրիշ մոլորակաց պէս ինքն իրմէ լոյս չունի և արեւէն կ'առնու իր լոյսն ու ջերմութիւնը , ուսկից 83 միլիոն մղոն հեռու է և անկէց 1,410,559 անգամ սղտիկ է :

Իսայ խօսքերնիս կարգաւ մը առաջ վարելու համար , և ընթերցողաց դիւրահասկանալի ըլլալու համար , երկիրս երկու կերպով կը նկատենք , մէյնը ըստ ուսումնական կամ չափաբերական մասին , մէյնըն ալ ըստ բնական մասին : Իս առաջին բաժանմունքէն սկսեալ քննենք հոս երկրիս ձևը , մեծութիւնը և դիրքը :

Չե երկր : — Երկրիս ձևոյն վրայ հիները այնպիսի կարգէ դուրս ու տըղայական կարծիքներ ունեցեր են , որ մարդ կը զարմանայ թէ ինչպէս երկարատեն այս կարծիքները պաշտպանողներ ալ գտուեր են : Բնաջին և հասարակ կարծիքն այն եղաւ ինչ որ առջի բերան մարդուս աչքը կը տեսնէ . այսինքն երկիրս տափարակ մակերևոյթ մըն է . և որովհետեւ որ կողմն ալ որ կ'երթային դիմացնին վերջապէս ծով կ'ելլէր , կարծեցին թէ երկրիս չորս դին ջրոց անդունդ մը պաշարեր է , ուսկից ամէն առաւօտ արևը կ'ելլէ , ու ամէն իրիկուն մէջը կ'ընկղմի : Իս որովհետեւ արևը ծագելու ժամանակ՝ երկնքի աստեղաց լոյսը կամաց կամաց կը նուազի ու չեն տեսնուիր , երևակայեցին որ անոնք ալ մէյնէկ ջահ ըլլան որ գիշերները միայն կը վառին , և այնչափ ձէթ ունին որ մինչև առաւօտ կը բաւէ :

Երկրիս ունեք ալ որ երկիրս կոնքաձև է ըսին , որպէս զի կարող ըլլայ զՍուրը զսպել որ դուրս չի թափի . ունեք ալ